ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» ---------- 2014թ. N ------Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ միանալու Եվրոպական Միության «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՊԵՏՆԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քաղաքապետերի դաշնագիրը» (այսուհետ՝ Դաշնագիր) Եվրոպական Միության կողմից մեկնարկած նախաձեռնություն է, որը կոչված է համընդհանուր կամավորական պատասխանատվությամբ միավորելու տեղական ինքնակառավարման մարմիններին և տարածաշրջանային իշխանություններին՝ հօգուտ «կանաչ տնտեսական աճ»-ի և կյանքի որակի բարելավման: Դաշնագիրը ստորագրող համայնքները կամավոր կերպով համաձայնվում են իրենց վարչական տարածքների ներքո էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտներում իրականացնել համապատասխան գործողություններ, որոնք թույլ կտան մինչև 2020թ. առնվազն 20%-ով կրճատելու ածխաթթու գազի (CO_2) արտանետումները՝ համայնքի կողմից ընտրված ելակետային տարվա արտանետումների մակարդակի համեմատ:

Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված միջազգային այս նախաձեռնությունը հիմնված է քաղաքային համայնքների մասնակցության վրա, քանի որ ըստ ժամանակակից վիճակագրական տվյալների (Եվրոպական Միության երկրներում ջերմոցային գազերի արտանետումների գույքագրումների արդյունքների համաձայն) ներկայումս էներգասպառման և ջերմոցային գազերի արտանետումների ծավալի մոտ 80%-ը բաժին է ընկնում քաղաքներին:

Նախաձեռնությունը սկզբում նախատեսված էր Եվրամիության անդամ երկրների քաղաքների համար, սակայն 2011թ. սեպտեմբերին մեկնարկել է “Աջակցություն Արևելյան Գործընկերության և Կենտրոնական Ասիայի քաղաքներին Քաղաքապետերի Դաշնագրի գործընթացին մասնակցության համար” (Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք) տարածաշրջանային ծրագիրը, որին մասնակցում են 11 երկրներ, այդ թվում նաև Հայաստանը:

Արևելյան Գործընկերության և Կենտրոնական Ասիայի երկրների համար առաջարկվեցին մի շարք նորարարական մոտեցումներ, որոնց նպատակն էր ավելի դյուրին դարձնել այդ երկրների քաղաքների մասնակցությունը Դաշնագրում: Մասնավորապես, ներդրվեցին ջերմոցային գազերի արտանետումների գնահատման ավելի ճկուն մոտեցումներ և մշակվեցին համապատասխան ուղեցույցներ և ձեռնարկներ:

Մասնակցությունը «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը համայնքներին հնարավորություն է ընձեռում ապահովել հետևյալ արդյունքները՝

- Բարելավել շրջակա միջավայրը՝ նվազեցնելով ջերմոցային գազերի և այլ նյութերի արտանետումների մակարդակը;
- Բացահայտել քաղաքային տնտեսության էներգասպառման հիմնական ոլորտները և գնահատել այդ ոլորտներում էներգախնայողության տեխնիկական և տնտեսական ներուժը;

- Բարձրացնել մատուցվող ծառայությունների (օրինակ՝ արտաքին լուսավորության, ջերմամատակարարման, տրանսպորտի և այլն) որակը և հարմարավետության պատշաճ մակարդակը;
- Նպաստել քաղաքի մակարդակով էներգետիկ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործմանը;
- Մշակել և ըստ առաջնահերթության դասակարգել էներգախնայողական միջոցառումները;
- Նպաստել առաջարկվող միջոցառումների իրականացմանն ուղղված տեղական և միջազգային ներդրումների ներգրավմանը և աշխատատեղերի ստեղծմանը;
- Նվազեցնել էներգասպառման հետ կապված քաղաքապետարանի ծախսերը:

Առ այսօր նախաձեռնությանը միացել են տարբեր երկրների ավելի քան 5700 քաղաքներ, ավելի քան 30 մայրաքաղաքներ և քաղաքային համայնքների ասոցիացիաներ: ԱՊՀ երկրների մայրաքաղաքներից Դաշնագրին միացել են Կիևը, Աստանան, Քիշնևը և Թբիլիսին:

Նախաձեռնությանը միանալու համար անհրաժեշտ է Երևան քաղաքի ավագանու հավանությունը, որը սահմանված է նախաձեռնության կանոնակարգով, ինչից ելնելով ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

2. Նախաձեռնությանը անդամակցող համայնքները և դրանց պարտավորությունները

Համաձայն միջազգային ընթացակարգի, Դաշնագրին միանալու ցանկություն ունեցող համայնքները պետք է կատարեն հետևյալ գործողությունները.

2.1. Անդամակցում Դաշնագրին
2.2. Քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի (ԿԷԶԳԾ) մշակում
2.3. Քաղաքապետարանի կազմում համապատասխան վարչական ռեսուրսների ստեղծում
2.4. ԿԷԶԳԾ-ի միջոցառումների իրականացում և մոնիտորինգ
2.5. Էներգետիկ օրերի կազմակերպում

5. Քաղաքապետարաններին աջակցող կառույցները

Վերը հիշատակված գործընթացներում քաղաքապետարանների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով գործում է բազմակողմանի աջակցության համակարգ, որում ներառված են հետևյալ կառույցները.

- Աջակիցները: Տեղական և տարածքային կառավարման մարմիններ կամ միջհամայնքային միավորումներ, որոնք հաստատել են իրենց պատրաստակամությունը աջակցելու Դաշնագրի կողմ հանդիսացող քաղաքներին:

  Հայաստանում Դաշնագրի աջակիցներն են Հայաստանի Համայնքների Միությունը և Էներգախնայողության Աջակցության Հիմնադրամը:

- Համակարգողները: Պետական մարմիններ, օրինակ, նախարարություններ կամ գործակալություններ, որոնք ապահովում են Դաշնագրի իրականացման քաղաքական աջակցությունը, ինչպես նաև ի զորու են տրամադրել մասնակից քաղաքներին տեխնիկական, տեղեկատվական և, հնարավորության դեպքում, նաև ֆինանսական աջակցություն Դաշնագրի շրջանակներում իրենց պարտավորությունները կատարելու համար:

  Հայաստանում Դաշնագրի համակարգողն է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը:

- Հետազոտությունների համատեղ կենտրոն: ԵՀ-ի կողմից ստեղծված փորձագիտական խումբ, որն աջակցում է քաղաքներին՝ համապատասխան ուղեցույցների, ձեռնարկների և մեթոդաբանությունների մշակման միջոցով:

  «Աջակցություն Արևելյան Գործընկերության և Կենտրոնական Ասիայի քաղաքներին Քաղաքապետերի Դաշնագրի գործընթացին մասնակցության համար» տարածաշրջանային ծրագիրը տրամադրում է տեխնիկական և փորձագիտական աջակցություն Դաշնագրին մասնակցող և մասնակցության պատրաստակամություն ունեցող համայնքներին:

- Ֆինանսական աջակցություն: Դաշնագրին անդամակցող Արևելյան Գործընկերության և Կենտրոնական Ասիայի քաղաքներին աջակցության նպատակով Եվրահանձնաժողովի կողմից ստեղծվել են ֆինանսական աջակցության տարբեր մեխանիզմներ, որոնք տրամադրում են դրամաշնորհային և վարկային միջոցներ՝ քաղաքների ԿԷԶԳԾ-երում նշված միջոցառումների իրականացման համաֆինանսավորման համար: Հայաստանում Դաշնագրի շրջանակում ֆինանսական աջակիցներն են Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD), Ներդրումների եվրոպական բանկ (EIB), Համաշխարհային էկոլոգիական հիմնադրամ (GEF) (ներառյալ EBRD, UNDP, UNEP, UNIDO, IBRD), Եվրասիական Զարգացման բանկ (EDB), Ասիական զարգացման բանկ (ADB), Համաշխարհային բանկ (IFC Subnational Finance), ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (USAID), KfW և այլն:

6. Դաշնագրի կարգավիճակը Հայաստանում

2014թ. հունիս ամսվա դրությամբ Դաշնագրին միացած հայաստանյան քաղաքների ցանկը բերված է ստորև՝

1. Ծաղկաձոր՝ միացել է 09.06.2009թ.
2. Հրազդան՝ միացել է 21.05.2013թ.
3. Ապարան՝ միացել է 02.09.2013թ.
4. Սպիտակ՝ միացել է 22.05.2014թ.
5. Վայք՝ միացել է 27.05.2014թ.
6. Գյումրի՝ միացել է 13.06.2014թ.
7. Արթիկ՝ միացել է 20.06.2014թ.
8. Դիլիջան՝ միացել է 27.06.2014թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Եվրոպական Միության «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը անդամակցելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Եվրոպական Միության «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը անդամակցելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում ծախսեր և փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ